



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԴԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2021

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՐԿԱ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՀԵՂԻՆԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԶ Ք.ՎԱԴԱՐՇԱՊԱՏ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՏԱՄԵՋԻ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ

Բովանդակություն

| | |
|---|----|
| 1.Ներածություն ----- | 2 |
| 2. Գլուխ 1.«Տեխնոլոգիա» առարկան ԿԱՊԿՈՒ սովորողների համար ----- | 3 |
| 3. Գլուխ 2.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների աշխատանքային գործունեության յուրահատկությունները----- | 5 |
| 4. Գլուխ 3. ԿԱՊԿՈՒ սովորողը կրթական գործընթացում ----- | 6 |
| 5. Գլուխ 4. Խաղը՝ որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ձև ----- | 8 |
| 6. Գլուխ 5. Համագործակցությունը՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց ----- | 10 |
| 7. Գլուխ 6. Անհատական ուսուցման պլանով աշխատելու առանձնահատկությունները ----- | 13 |
| 8. Եզրակացություն ----- | 14 |
| 9. Օգտագործված գրականության ցանկ ----- | 15 |

Ներածություն

Տարրական և միջին դասարաններում «Տեխնոլոգիա» առարկան սովորողների մտավոր, ֆիզիկական, ստեղծագործական և գեղագիտական զարգացման կարևոր միջոց է:

«Տեխնոլոգիայի» կրթական խնդիրն է սովորողների տեխնոլոգիական պատրաստվածության ապահովումը , որը ներառում է աշխատանքային կուլտուրայի դաստիարակումը, ինչպես նաև ունակությունների և ընդհանուր աշխատանքային հմտությունների ձևավորումը: «Տեխնոլոգիան» համալիր գիտություն է, որն իր մեջ ամփոփում է միջառարկայական կապեր՝ խթանելով դրանց ուսուցման արդյունավետության բարձրացումը:

Այդ բոլոր խնդիրներն արդյունավետ լուծում կստանան ինչպես տեսական, այնպես էլ գործնական-ստեղծագործական աշխատանքներ կատարելիս:

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդումը կրում է նպատակային բնույթ, զարգացնում է սովորողների մոտ ինքնուրույնություն, հասարակական աշխատանքի նշանակության վերաբերյալ արժեքային ընկալումներ: Ուսուցիչը պետք է համակարգված և նպատակաուղղված աշխատանք իրականացնի սովորողների դաստիարակության ուղղությամբ, հասկանալով, որ հատկապես ցածր դասարաններում է ձևավորվում սովորողի անձնային հիմնական որակները, ձևավորվում է բնավորությունն ու համոզմունքները: Հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները պետք է կազմվեն անհատական ուսուցման պլան (ԱՈԻՊ):

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մոտ, ուսուցման ձևը մեծ մասամբ կախված է սովորողների մտավոր և պրակտիկ գործունեության յուրահատկություններից, ուսուցման մեթոդների և միջոցների ճիշտ ընտրությունից, որոնք ապահովում են օպտիմալ պայմաններ, աշխատանքային գիտելիքներ, ունակություններ և հմտություններ ձևավորելու համար:

Գլուխ 1. «Տեխնոլոգիա» առարկան ԿԱՊԿՈՒ սովորողների համար

ԿԱՊԿՈՒ սովորողների համար «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչը և ուսումնական ծրագիրը կոչված է ապահովելու երեխաների համար ուսման հավասար հնարավորություններ, նպատակաուղղված է ուսման դժվարություններ ունեցող երեխաների հանրակրթական հաստատություններում իրենց հասակակիցների հետ հավասար պայմաններում սովորելուն, հետագա կենսագործունեության համար գիտելիքների, կարողությունների և աշխատանքային հմտությունների ձեռքբերմանը:

«Տեխնոլոգիա» առարկայից սովորողները ստանում են նախնական ընդհանուր աշխատանքային պատրաստվածություն, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների, ձեռք են բերում կենցաղում աշխատանքային հմտություններ:

Ծրագրի և չափորոշիչի բովանդակային հիմքն են կազմում նյութերի ձեռքով մշակման տեխնոլոգիաների, պարզագույն տեխնիկական սարքերի, բույսերի աճեցման, կենցաղի և գրաֆիկայի մասին նախնական գիտելիքներ:

«Տեխնոլոգիայի» դասերին ձևավորվում է հաղորդակցական և կազմակերպչական հմտություններ, աշխատասիրություն, նպատակասլացություն, պատասխանատվություն և մարդկանց նկատմամբ հարգալից վերաբերմունք:

ԿԱՊԿՈՒ սովորողների մոտ ուսուցման ձևը մեծ մասամբ կախված է նրանց մտավոր և պրակտիկ գործունեության յուրահատկություններից, ուսուցման մեթոդների և միջոցների ճիշտ ընտրությունից:

ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման ընթացքում անհրաժեշտ են մեթոդների և ուսումնական նյութերի բազմազանություն, որոնք ընտրվում են սովորողների կարողություններին համապատասխան: Աշխատանքի խմբային ձևերի կազմակերպման դեպքում սովորողները կարծես ներգրավվում են պարզագույն արտադրողական հարաբերությունների մեջ:

ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի համար մշակվում է անհատական ուսումնական պլան (ԱՌԴ): ԱՌԴ-ում պետք է ներառել «Տեխնոլոգիա» առարկայից սովորողների ուսումնական առաջընթացի մասին անհրաժեշտ տեղեկատվություն՝ յուրաքանչյուր սովորողի առանձնահատկություններից բխող խնդիրների պարտադիր հաշվառմամբ:

«Տեխնոլոգիայի» դասերի ժամանակ իրականացվում է իմացական դիտողականության, երևակայության, խոսքի, տարածության մեջ կողմնորոշվելու, ինչպես նաև ֆիզիկական խնդիրների, հատկապես մատների մանր շարժունության՝ մոտորիկայի զարգացմանը: «Տեխնոլոգիայի» դասերը սերտորեն առնչվում են ընթերցանության և խոսքի զարգացմանը, մաթեմատիկայի, նկարչության և այլ առարկաների խնդիրներին: Ծրագրում ուսումնական նյութը բաժանված է ըստ ուսումնական տարիների՝ ելնելով երեխաների հոգեֆիզիկական և տարիքային առանձնահատկություններից: Նախատեսված են աշխատանքի հետևյալ տեսակները.

- աշխատանք կավով և պլաստիլինով,
- աշխատանք բնական և արհեստական նյութերով,
- աշխատանք թղթով և սովարաթղթով,
- աշխատանք մանածագործական նյութերով,
- աշխատանք փայտանյութով,
- խոհարարական աշխատանքների կազմակերպում,
- այգեգործական աշխատանքների կազմակերպում:

Գլուխ 2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների աշխատանքային գործունեության յուրահատկությունները

Հանրահայտ է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները հաջողությամբ են կատարում աշխատանքային առաջադրանքները, եթե տիրապետում են դրանց կատարման միջոցներին և հմտություններին: Այդ գործընթացի կարգավորմանը նպաստում են նաև ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, պլանավորման հմտությունները և շատ այլ գործոններ:

Բազմիցս կրկնվող որոշակի գործողությունների արդյունքում սովորողների մեջ ձևավորվում և հիմնավորվում են որոշակի կարողություններ և հմտություններ: ԿԱՊԿՈՒ սովորողների միջավայրում հատուկ վարժություններն օգտագործվում են ոչ միայն ընդհանուր աշխատանքային հմտությունների ուսուցման, այլև մտավոր գործունեության զարգացման նպատակով: Որպեսզի նրանց մեջ ձևավորվեն ու ամրապնդվեն աշխատանքային հմտություններ և ունակություններ, հարկավոր է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ յուրացված ունակություններն ու հմտությունները, գործունեության ձևերը այլ պայմաններում (կենցաղում) օգտագործելու համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մեջ շարժիչ աշխատանքային ունակությունների ձևավորումն ունի կարևոր նշանակություն նրանց պրակտիկ գործունեության համար: Բանն այն է, որ սովորողի որևէ գործողություն, երբ նա չունի համապատասխան հմտություններ, կպահանջի մեծ ջանքեր և ժամանակ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցման նախնական փուլում ցածր դասարանի սովորողները շարժողական վարժությունները կատարում են մեծ դժվարությամբ: Նրանց ձեռքերն ու մատները գտնվում են լարված վիճակում, շարժումներն անկանոն են, ոչ ճկուն և ռիթմիկ: Մի վարժության կատարումից հետո սովորողն երկար մտացում է, թե ինչ անի այնուհետև: Նրան հարկավոր է ոչ միայն ուշադրություն դարձնել առաջադրանքի կատարման ընթացքին, այլև դրա համար անհրաժեշտ միջոցներին, ինչպես նաև հսկել կատարած աշխատանքի ընթացքում ստեղծված արդյունքի որակը: Դա ազդում է աշխատանքի վերջնական արդյունքի վրա և առաջացնում է ֆիզիկական հոգնածություն: Մի քանի վարժություններից հետո երեխան կորցնում է հետաքրքրությունն աշխատանքի նկատմամբ:

Գլուխ 3. ԿԱՊԿՈՒ սովորողը կրթական գործընթացում

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներն առանձնահատուկ աջակցության կարիք ունեն: Յետևաբար նրանք ավելի հաջողակ կլինեն ուսման մեջ, եթե կրթական գործընթացում հաշվի առնվեն նրանց հատուկ կարիքները:

- Այն ժամանակ, երբ դասարանն աշխատում է առաջադրանքի վրա, ուսուցիչը կարող է անհատապես աշխատել մեկ կամ երկու աշակերտների հետ՝ նրանց հետ քննարկելով դասի առանձին կետեր, կամ օգնել նրանց անցնելու առաջադրանքի թիմային համապատասխանող անհատական աշխատանքի:
- Սովորողները կարող են բաժանվել խմբերի՝ ըստ իրենց ընդունակությունների: Ուսուցիչը կարող է անցնել մի խմբից մյուսին և անհրաժեշտության դեպքում նրանց ընդունակություններին համապատասխան օգնություն ցուցաբերել:
- Կարելի է հատուկ կարիքով երեխային նստեցնել մինևույն նստարանի վրա բարձր առաջադիմությամբ սովորողի հետ, որը կօգնի նրան առաջադրանքները կատարելու, և լավ օրինակ կձառայի: Տվյալ մեթոդը կոչվում է «հասակակցի ուսուցում», և երկու սովորողներն էլ այս դեպքում միայն շահում են:

Օժանդակ միջոցներ

Սովորողի ուսուցման հետ կապված հիմնախնդիրները կարող են հաղթահարվել օժանդակ միջոցների և հարմարանքների օգնությամբ:

- **Ուսուցանող օժանդակ միջոցներ:** Իրենց պարապմունքների ընթացքում մանկավարժների կողմից օգտագործվող այս միջոցների թվին են դասվում քարտեր, նկարներ, պատի պաստառներ: Դրանք օգուտ էին բերում ոչ միայն հատուկ կարիքներով երեխաներին, այլև մնացած սովորողներին: Հատուկ կարիքներով սովորողների համար անհրաժեշտ կլինեն նաև խոշոր տառերով պաստառների պատրաստում կամ երեխայի՝ շոշափելիքի միջոցով առարկայի ճանաչողականությունն ապահովող մուլյաժների օգտագործում:
- **Խաղային օժանդակ միջոցներ:** Կրտսեր դպրոցի աշակերտների ուսուցման խաղային օժանդակ միջոցների մի ամբողջ շարք կարել է ստեղծել ոչ թանկ նյութերից, այդ թվում՝ խաղալիքներից, տիկնիկներից, երաժշտական գործիքներից:
- **Դասասենյակի սարքավորումը:** Դասասենյակի առարկաները հարմարեցնել սովորողների կարիքներին՝ դրանք դարձնելով ուսման օժանդակ գործիքներ:
- **Դասասենյակի կահույքը:** Հատուկ կարիքով սովորողները երբեմն ուղիղ նստելու դժվարություններ են ունենում: Այդ դեպքում անհրաժեշտ է լինում հատուկ աթոռներ կամ պահող հարմարանքներ:

Ոսկե կանոններ

Գոյություն ունի ինը ոսկե կանոն, որոնք մեզ կօգնեն լուծել դասավանդմանն առնչվող խնդիրներ այն դասարաններում, որոնք տարբերվում են իրենց բազմակերպ և բազմաբնույթ կառուցվածքով, հատկապես, եթե այդ դասարաններում սովորում են ուսուցման հատուկ կարիքներով երեխաներ: Ամբողջ աշխարհի մանկավարժները դրանք օգտակար են համարում, քանզի դրանց կիրառումը գործնականում հանգեցնում է սովորողների ուսման առաջադիմության բարձրացմանը: Դրանք են՝

1. Ուսումնական գործընթացի մեջ ներգրավել դասարանի բոլոր աշակերտներին
2. Շփվել
3. Ղեկավարել դասարանը
4. Պլանավորել ձեր պարապմունքները
5. Ստեղծել անհատական պլաններ
6. Ապահովել անհատական օգնություն
7. Օգտագործել օժանդակ սարքեր
8. Ղեկավարել վարքագիծը
9. Աշխատել միասին

Գլուխ 4. Խաղը՝ որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ձև

Խաղի նպատակային կիրառումը առավել արդյունավետ է դարձնում ուսումնադաստիարակչական գործընթացը, խթանում է սովորողի բազմակողմանի զարգացումը:

Խաղը անգնահատելի նշանակություն ունի սովորողի մտավոր, ֆիզիկական, գեղագիտական, բարոյական, հոգեկան զարգացման, ինչպես նաև անձնավորության ձևավորման գործընթացում: Առանց խաղի երեխայի կյանքն անհնար է:

Խաղային գործունեությունը բնական գործընթաց է, որտեղ չկա ճնշում, հարկադրանք և սովորողի համար ստեղծված են բնական պայմաններ՝ անկաշկանդ գործելու և արտահայտելու իր հույզերը, զգացմունքները, ցանկությունները:

Խաղը նպաստում է սովորողի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

Խաղերը զարգացնում են սովորողի ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր կարողությունները, զարգացնում են սովորողի խոսքը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մտածողությունը:

Դաստիարակում են ընկերասիրություն, կոլեկտիվում համատեղ գործելու և ընկերոջ կարծիքը հաշվի առնելու կարողություն, շարժախաղերը նպաստում են նաև մկանային համակարգի, աչքի և ձեռքի կոորդինացիայի, ճարավության, շարժունակության և հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Ժամանակակից կրթական համակարգը կարևորում է խաղի դերը աշակերտակենտրոն ուսուցման գործընթացում:

Փորձը ցույց է տվել, որ խաղային մեթոդն ունի զարգացնող, շտկող, ուսուցանող մեծ ներուժ: Խաղը լայնորեն կիրառվում է արդի մանկավարժության և հոգեբանության մեջ:

Հատուկ մանկավարժության մեջ խաղային մեթոդը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում: Այն կարող է խաղն ու ուսուցումը կապող օղակ լինել, ավելի դյուրին ու մատչելի դարձնել ուսումնական գործընթացը, հնարավորություն տալ մանկավարժին կրկնել, ամրապնդել ուսուցանվող նյութը, կատարել նոր նյութի հաղորդում, ունակությունների, գիտելիքների գնահատում և ամրապնդում:

Սովորողը խաղի միջոցով ավելի շուտ է ընկալում և չի մոռանում սովորածը: Խաղերը լինում են՝ դիդակտիկ, շարժողական, սյուժետադերային, թատերականացված, կառուցողական և զվարճալի:

Խաղ 1. «Մասնատի՛ր պատկերը»

Նպատակը - Չարգացնել առարկայի ամբողջական պատկերը ընկալելու կարողություն:

Ընթացքը - Ուսուցիչը սովորողին ցուցադրում է որևէ նկար, օրինակ՝ ծաղկի, և առանձին նշում, թե ինչ մասերից է բաղկացած (ցողուն, տերև, թերթիկներ), հետո առաջարկում է սովորողին պլաստիլինից մաս-մաս ծեփել ծաղիկը:

Խաղ 2. «Ձեռքեր»

Նպատակը - Չարգացնել ձեռքի մատների շարժողականությունը և հիշողությունը:

Ընթացքը - Ուսուցիչը սովորողներին բաժանում է գունավոր թղթեր: Յուրաքանչյուր սովորող պետք է հիշի, թե ում մոտ ինչ գույն կա, որից հետո ուսուցչի օգնությամբ սովորողներից յուրաքանչյուրը թղթի վրա դնում է իր ձեռքի ակնիկը և նկարում այն: Ապա նրանք մկրատով կտրում են իրենց նկարած«ձեռքերը»:«Ձեռքերը» դրվում են ընդհանուր արկղի մեջ: Սովորողներից յուրաքանչյուրը պատահականորեն ընտրում է որևէ ձեռք և փորձում գույնով գուշակել, թե ում ձեռքն է :

Խաղ 3. «Ուլունքներ տիկնիկի համար»

Նպատակը - Չարգացնել ձեռքերի համաձայնեցված շարժումները, արթնացնել հուզական վերաբերմունք կատարած գործողության նկատմամբ:

Անհրաժեշտ նյութեր - Խոշոր ուլունքներ, գունավոր թելեր, տիկնիկներ:

Խաղի ընթացքը - Ուսուցիչն ասում է, որ այսօր տիկնիկներից մեկի ծննդյան օրն է, և այդ պատճառով բոլորը պետք է գեղեցիկ հագնվեն: Ուստի նրանց պետք են վզնոցներ: Սովորողները գունավոր թելերի վրա շարում են ուլունքները և կախում տիկնիկների պարանոցներին:

Գլուխ 5. Համագործակցությունը՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց

Ուսուցիչը պետք է լուծի մի շարք խնդիրներ, թե ինչպես օգնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին՝ գտնելու իր տեղը դասարանում, առաջադրանքի կատարման ընթացքում լինել ինքնավստահ, օգնել սովորողների միջև ձևավորելու համապատասխան փոխհարաբերություններ:

Համագործակցային ուսուցման ընթացքում սովորողների մոտ առաջանում են ընկերոջից օգնություն ընդունելու, ընկերոջն օգնելու կարողություններ, այսինքն՝ սովորողներն հանդես են գալիս որպես համագործակցողներ:

Տարրական դպրոցում առավել հարմար և արդյունավետ է զույգով աշխատանքը: Այս դեպքում աշխատանքի արդյունքն ստեղծվում է երկու մասնակիցների կողմից ստացված արդյունքներից: Այսինքն՝ ընդհանուր արդյունքը կախված է յուրաքանչյուր սովորողի աշխատանքի արդյունքներից: Բանն այն է, որ կլինեն սովորողներ, որ հրահանգներն ընդունելու ոչ բավարար զարգացած կարողություն կունենան, և հնարավոր է՝ դժվարանա առաջադրանքը կատարել: Աշխատանքը շարունակելու համար անհրաժեշտ են լրացուցիչ հրահանգներ (այն կարող է տալ և՛ ուսուցիչը, և՛ զուգընկերը):

Սովորողը, որի մոտ դժվարություններ է հանդիպում գործնական հարաբերությունների հաստատման ժամանակ, չի կարող ինքնուրույն կազմակերպել իր գործունեությունը: Նրան անհրաժեշտ է լրացուցիչ օգնություն: Ուսուցիչը կամ խմբի անդամներից մեկը մեկ անգամ ևս բացատրում է առաջադրանքը, օգնում պարտականությունների բաշխման մեջ, առաջարկում մյուսներին՝ օգնել ընկերոջը:

Խմբերում կատարվում է նաև սովորողների այնպիսի դերերի բաշխում, որոնք առնչվում են ոչ թե առաջադրանքի կատարմանը, այլ խմբի արդյունավետ գործունեության ապահովմանը: Համագործակցային աշխատանքի ժամանակ խմբի բոլոր անդամները համոզվում են, որ առանց մեկը մյուսի չեն կարող հասնել հաջողության:

Համագործակցային ուսուցման մեթոդով կազմակերպված դասի նմուշ-օրինակ

Դասի թեման՝ Աշխատանք բնական նյութերով (աշնանային տերևներ), Կենդանիներ և թռչուններ

Դասի նպատակը՝ Սովորողը պետք է կարողանա.

- աշնանային տերևները նախապատրաստել (հավաքել, մաքրել, չորացնել),
- աշխատել մկրատով, սոսնձով,
- տերևներից պատրաստել հարթ ապլիկացիա՝ կենդանի, թռչուն և այլն,
- համագործակցել համադասարանցիների հետ:

Անհրաժեշտ նյութեր՝ Աշնանային տերևներ, սերմեր, ճյուղեր, սոսինձ, մկրատ, թուղթ:

Դասի ընթացքը.

Խթանման փուլ.

Կազմակերպել մտքերի տարափ՝ «Ինչ գիտեք աշնան մասին» հարցի շուրջ: Ուղղորդող հարցերի միջոցով հասնել նրան, որ մասնակցեն նաև ներառված (ԿԱՊԿՈՒ) սովորողները: Ուղղորդող հարցերը կարող են լինել հետևյալ բնույթի՝

- Ինչ գույն ունեն աշնանային տերևները,
- Ինչ բնական նյութեր եք հավաքել զբոսանքի ժամանակ և այլն:

Մտազորոհի արդյունքները գրանցել գրատախտակին:

Իմաստի ընկալման փուլ

Դասարանը բաժանել խմբերի: Ներառված սովորողներին ընդգրկել խմբերում: Յուրաքանչյուր խմբին տրվում է հանձնարարություն՝ քննարկել և որոշել, թե ինչ կենդանի կամ թռչուն են պատրաստելու: Գրատախտակին փակցնել գունավոր թուղթ, որի վրա դասի վերջում կհավաքվի աշնանային տերևներով կենդանիների կամ թռչունների պատկերներով աշխատանքներ: Խմբերը սկսում են աշխատել՝ յուրաքանչյուր խմբի անդամ ունենում է իր համար առանձին հանձնարարություն՝ պատրաստել կենդանու գլուխը, մարմինը, պոչը, աչքերը, քիթը, ականջները: Այս դեպքում դասընկերոջ ուղղորդմամբ ներառված երեխան պետք է կարողանա պատրաստել իրեն հանձնարարված մասը: Խմբի ներսում սովորողները մի դեպքում սովորում են, մյուս դեպքում սովորեցնում: Դասարանի համագործակցության ընթացքում ծնվում է մի ընդհանուր աշխատանք, որի առանձին դետալները պատրաստել են ենթախմբերը, իսկ ամբողջական աշխատանքը բոլորինն է:

Կշռադատման փուլ.

Խմբերը ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները: Յուրաքնչյուր խմբից մեկը մոտենում է գրատախտակին, պաստառի վրա ստսնծում իր խմբի պատրաստածը: Վերջում, երբ բոլոր խմբերը փակցնում են իրենց աշխատանքները, խմբերը որոշում են, թե ինչ նոր դետալներ պիտի ավելացնեն պաստառին (խոտեր, արև, ամպ), որպեսզի աշխատանքը ունենա ավարտուն տեսք: Ուսուցիչը քննարկում է կազմակերպում՝ աշակերտները մեկնաբանում են ինչպես իրենց, այնպես էլ ընկերների աշխատանքները: Անհրաժեշտ լրացումները և ուղղումները նախ իրականացվում են սովորողների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ուսուցչի միջոցով: Յուրաքնչյուր սովորող երկու դեպքում էլ գնահատվում է , և՛ որպես սովորեցնող, և՛ որպես սովորող:

Մեթոդական ցուցումներ՝

Համագործակցային մեթոդով կարելի է կազմակերպել ցանկացած կոմպոզիցիայի պատրաստում: Ամբողջական կոմպոզիցիան կարող է պատրաստել ինչպես դասարանը, այնպես էլ ենթախումբը, որտեղ ինտեգրված է ներառված սովորողը: Այս փուլում կարևոր է ճիշտ կատարել հանձնարարությունների բաժանումը, հաշվի առնելով հատկապես ներառված սովորողի հնարավորությունները, կարողությունները: Խմբի անդամները քննարկում են՝ որոշում են, թե ով ինչ պիտի անի: Ուսուցիչն ուղղորդում է առաջին հերթին այն խմբի քննարկումը, որտեղ գտնվում է ներառված սովորողը: Եթե սովորողը դժվարանում է, նրան օգնում է կամ ուսուցիչը, կամ ընկերները: Սովորողները սովորեցնելով սովորում են:

Գլուխ 6. Անհատական ուսուցման պլանով աշխատելու առանձնահատկությունները

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար մշակվում է անհատական ուսումնական պլան (ԱՌԴՊ): Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպելուն և նրանց հատուկ կարիքները բավարարելուն:

Անհատական ուսումնական պլանի մշակման համար դպրոցում ստեղծվում է աշխատանքային խումբ: Սովորողի ընտանիքը նույնպես խմբի կարևոր մասն է կազմում, քանի որ սովորողին ամենալավ ճանաչողները ընտանիքի անդամներն են: ԱՌԴՊ-ը կարևոր միջոց է հատուկ կարիքներով սովորողներին կրթելու խնդրում: Այն պաշտոնական, գրավոր փաստաթուղթ է, որը նկարագրում է սովորողի ով լինելը, նրա առանձնահատկությունները, և իհարկե, բոլոր այն կրթական ու մանկավարժահոգեբանական ծառայությունները, որ նա պետք է ստանա: Ուսուցիչների, ծնողների, հատուկ մանկավարժների և այլ մասնագետների համար անհատական ուսումնական պլանը ուղեցույց է, որն օգնում է սովորողներին ավելի արդյունավետ կրթություն:

ԱՌԴՊ-ը սովորողի կրթական գործընթացի պլանավորումն է : Այն պետք է ունենա հատուկ ձևակերպված վերջնանպատակ, տարեկան նպատակ, կարճաժամկետ խնդիրներ՝ վերջնանպատակին և տարեկան նպատակին հասնելու համար և տարեկան ծրագիր:

ԱՌԴՊ-ը գրվում է որոշակի ժամանակահատվածի համար: ԱՌԴՊ կազմող թիմը պետք է հավաքվի 6, իսկ անհրաժեշտության դեպքում 3 ամիսը մեկ անգամ, որպեսզի վերանայի նպատակները և խնդիրները, քննարկի սովորողի ուսումնական առաջընթացը:

Եզրակացություն

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդումը ԿԱՊԿՈՒ սովորողների համար կարևոր կրթական գործընթաց է:

«Տեխնոլոգիա» առարկայի դասերին ձևավորվում է հաղորդակցական և կազմակերպչական հմտություններ, աշխատասիրություն, նպատակասլացություն, պատասխանատվություն և մարդկանց նկատմամբ հարգալից վերաբերմունք:

Գործնական աշխատանքները զարգացնում են ազատ, ինքնուրույն գործունեություն, հասակակիցների խմբում գործելու ունակություն, գեղագիտական ստեղծագործական ունակություններ, մշակում է սոցիալական, անձնային և այլ որակներ, ձևավորում է ներդաշնակ կապ բնության և սովորողի ներաշխարհի հետ: Ծանոթացնում է աշխատանքի կազմակերպման և դրա մշակույթի հետ: Սովորողների մոտ ձևավորվում է գեղագիտական ճաշակ և անվտանգ աշխատելու ունակություններ:

Գործնական աշխատանքների ընթացքում՝ աշխատելով երկու ձեռքով, միևնույն ժամանակ սովորողի մոտ զարգանում է ուղեղի երկու կիսագնդերը: Չարգանում է ձեռքի մատների շարժունակությունը, ինչպես նաև ձեռքի մատների մկանների ֆալանգները, որը նպաստում է խոսքի զարգացմանը:

Եվ ամենակարևորը, ԿԱՊԿՈՒ սովորողների համար «Տեխնոլոգիա» առարկան կարևոր նշանակություն ունի այն առումով, քանի որ սովորում են այն հմտությունները, կարողությունները, որոնք անհրաժեշտ են ինքնուրույն կյանքի համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Տեխնոլոգիա», 1-4-րդ դասարաններ, ուսուցչի ձեռնարկ,
2. «Տեխնոլոգիա», 5-7-րդ դասարաններ, ուսուցչի ձեռնարկ
3. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ուսուցման մեթոդական ձեռնարկ, «Տեխնոլոգիա» (1-4-րդ դասարաններ), Երևան 2010թ.
4. Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հետ աշխատելու ուսուցչի ուղեցույց, Երևան 2008թ.
5. Մտավոր խնդիրներ ունեցող սովորողների հետ աշխատող մանկավարժի ուղեցույց, Երևան 2008թ.